ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ _____/ Հ.Կոստանյան

<<_____>> սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի, քաղաք Վանաձորի

Հովհաննես Թումանյանի անվան

թիվ 3 հիմնական դպրոցի, I << բ >> դասարանի

դասվար՝ Բարոյան Նարինե Լյովայի

<< 2022-2023 >> ուստարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը):

   Ուսումնական տարվա սկզբին կազմավորվեց հետևյալ դասարանական կոլեկտիվը՝ 34 աշակերտ, որոնցից 17-ը՝ տղա, 17-ը՝ աղջիկ:

2. ՈՒսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

   - Դպրոց-ուսուցիչ-ծնող համագործակցությամբ դասասենյակի կահավորում ու հաճելի ուրախ ֆիզիկական միջավայրի ստեղծում :
   - Հետևողական աշխատանք տանել, որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանան հարմարվ դպրոցական առօրյային և պահանջներին:
   - Հետևողական աշխատանք տանել, որպեսզի ձևավորվի դասարանական առողջ մթնոլորտ որտեղ յուրաքանչյուր երեխա իրեն կզգա ընդհանուրի կարևոր մաս:

     Նպաստել ,որ երեխաները միմյանց նկատմամբ լինեն հարգալից, դասարանում տիր փոխզիջման, համագործակցության մթնոլորտ:

     Օգնել, որպեսզի երեխաները կարողանան հասկանալ գրենական պիտույքների դերն ն նշանակությունը և ճիշտ ձևով օգտվեն դրանցից:
   - Հիմք դնել ուսուցիչ-աշակերտ-ծնող ամուր ու արդյունավետ համագործակցությանը, թ ուսուցման և թե՛ դաստիարակության ոլորտում:
   - Նպաստել և զարգացնել օբյեկտիվ ձևով միմյանց խոսքով գնահատելու կարողություններն ն հմտությունները: Կարողանան ճիշտ գնահատել իրենք իրենց, դասընկերոջը, ուսուցչուհու երևույթներն ու իրադարձությունները:
   - Զարգացնել երեխաների լսելու կարողությունը, տրամաբանական, վերլուծակա մտածողությունը:
   - Հետևողական աշխատանք տանել տետրավարության ուղղությամբ:
   - Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ուսումնակա առաջադիմության բարձրացմանը, վեր կհանեն նրանց ունեցած դժվարություններն ն խնդիրները և կփորձենք համատեղ ուժերով գտնել լուծման ուղիներ:

3. Հայեցի դաստիարակություն

   - Հոգևոր դաստիարակություն- դաստիրակել սեր, հարգանք մեր հայրենիքի, խորհրդանիշնե նկատմամբ՝ գերբ, դրոշ օրհներգ: Ծանոթացնել մշակութային արժեքներին և սովորեցն գնահատել, պահպանել դրանք: Սովորեցնել արժևորել և դառնալ կրողը մեր նախնիներ ժառանգած ավանդույթների: Այցելել պատմամշակութային վայրեր, եկեղեցիներ:

- *Գեղագիտական դաստիարակություն-* նպաստել ֆիզիկական, հաճելի միջավայրի ստեղծմանն ու պահպանմանը: Սովորեցնել ընկալել գեղեցիկը, բարին ու լինել այդպիսին: Ծանոթացնել ազգային ավանդույթներին:
- *Ռազմահայրենասիրական դաստիարակություն-* դաստիարակել ազնվություն, մարդասիրություն, հայրենասիություն, սեր, հարգանք հարազատ քաղաքի, հայրենիքի ու նրա հերոսների նկատմամբ, ծանոթացնել հայ ժողովրդի հերոսական անցյալին: Հայրենասիրական զրույցների, երգերի, բանաստեղծությունների միջոցով բարձրացնել հայրենասիրական ոգին:
- *Ֆիզիկական դաստիարակություն-* հետևել աշակերտների ֆիզիկական աճին/հասակ, քաշ/, պահելաձևին: Խրախուսել երեխաների սպորտային խմբակներում ընդգրկվածությունը: Առաջնորդվել <<Առողջ հոգին՝ առողջ մարմնում>> կարգախոսով: Նպաստել աշակերտների ներդաշնակ ֆիզիկական զարգացմանը, հետևել օրվա ռեժիմին, հիգենիկ կանոնների պահպանմանը, ճիշտ կեցվածքին ու քայլվածքին:
- *Աշխատանքային դաստիարակություն* - խրախուսել և աջակցել աշակերտների աշխատասիրության և նպատակասլացության ձևավորմանը: Նպաստել, որ կարողանան հասնել իրենց առջև դրված նպատակներին, չծուլանան, զինվեն համբերությամբ ու համառությամբ:
- *Բնապահպանական դաստիարակություն-*հետևողական աշխատանք տանել, որ երեխաները հոգատար վերաբերմունք դրսևորեն բնության և շրջակա միջավայրի նկատմամբ, պահպանեն ու խնամեն իրենց շրջապատող բնության կանաչ անկյունները:
- *Դպրոց ընտանիք կապը-* ծնողներին ներգրավել դպրոցում իրականացվող աշխատանքներին: Նպաստել, որ ծնողները դառնան երեխաների ուսուցման պրոցեսի ակտիվ աջակիցն ու լավագույն ընկերը: Համագործակցությամբ փորձել լուծել առաջացած խնդիրները:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
	Նպաստել ֆիզիկական հաճելի, հարմարավետ և մաքուր միջավայրի ստեղծմանն ու պահպանմանը:	15.08-15.09	Դասվար, դասարան
	Երեխաներին ապահովել դասագրքերով: Կազմակերպել զրույց հետևյալ թեմայով՝ <<Գրքի դերն ու նշանակությունը>>:	Օգոստոս-սեպտեմբեր	Դասվար, դասարան,
	Դասարանական կանոնների մշակում և դրանց անմիջական կիրառություն:	Սեպտեմբեր	Դասվար, դասարան
	Ձևավորել աշակերտական և ծնողական ակտիվ:	Սեպտեմբեր	Դասվար, դասարան
	Կազմակերպական պաստառի ստեղծում	Սեպտեմբեր	Դասվար, դասարան
	Դասասենյակը զինել անհրաժեշտ դիդակտիկական պարագաներով խմբային և ամենօրյա աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներով(A4 չափի թղթեր, նշիչներ, կպչուն թղթեր, սպիտակ ու գունավոր կավիճներ, կոճգամներ, ամրակներ):	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Իրականացնել ամենօրյա հերթապահություն:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Դասարանական գույքի պահպանման նկատմամբ դրսևորել հետևողական վերաբերմունք: Նպաստել, որ գրենական պիտույքները խնամքով և տեղին օգտագործեն:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Զարգացնել բարեկիրթ պահելաձևի կանոններ. նպաստել, որ երեխաները կարողանան հարմարվել դպրոցին և ճիշտ պահվածք դրսևորեն, թե տանը, թե դպրոցում և, թե հասարակական միջավայրում:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Նպաստել և աջակցել երեխաների ինքնուրույնության, ուշադրության, գեղագիտական դաստիարակության ձևավորմանն ու զարգացմանը:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան

	Նպաստել հարգանքի փոխըմբռնման վրա հիմնված հարաբերությունների ձևավորմանը, արդարացիորեն, օբյեկտիվորեն խոսքով գնահատելու հմտության, կարողության ձևավորմանը:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Օգնել ուսուցման մեջ դժվարություններ ունեցող աշակերտներին, խրախուսել փոքրիկ հաջողությունները:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Օգնել, որպեսզի դպրոցը երեխայի համար դառնա հարազատ ու հաճելի միջավայր և ուսուցումը դարձնել մատչելի ու հետաքրքիր:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Համագործակցել ուսուցչի օգնականի, հոգեբանի հետ ի նպաստ աշակերտների:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Նպաստել , որպեսզի երեխաների մոտ ձևավորվի ընկերասիրություն , հանդուրժողականություն , ազնվություն:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Նպաստել, որպեսզի աշակերտները կարողանան տարբերակել լավն ու վատը և ձգտեն ընդօրինակել լավն ու բարին:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան
	Յուրաքանչյուր ծնողի համար բացահայտել իր երեխայի հաջողություններն ու թերացումները, որոնք առկա են և փորձել միասնական ջանքերով լուծում գտնել, թե ուսումնական և, թե դաստիարակչական խնդիրների կարգավորման հարցում:	Տարվա ընթացքում	Դասվար, դասարան